Արձանագրություն

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհրդի 2026 թ. մայիսի 15-ի թիվ 9 նիստի

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 20 անդամներից ներկա են 18-ը, քվորումն ապահովված է, և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատեց օրակարգը:

ԼՍԵՑԻՆ. – Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնի հավակնորդի ընտրության հարցը:

Նիստը նախագահող Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ դոցենտի պաշտոնի համար դիմել է բ.գ.թ., դոցենտ Անահիտ Մենեմշյանը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- Ն. Ն. Մարտիրոսյան, Տ. Ս. Սիմյան, Դ. Վ. Պետրոսյան, Ն. Է. Վարդանյան, Զ. Զ. Սարգսյան :

Նախագահող Ն. Մարտիրոսյանը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը, ապա առաջարկեց փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից ընտրել երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին գիտխորհրդի անդամներ Դ. Պետրոսյանի, Ս. Պետրոսյանի և Ա. Առաքելյանի թեկնածությունները: Այլ առաջարկներ չեղան: Նախագահողն առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը: Գիտական խորհուրդը քվեարկեց միաձայն: Սահմանված կարգով անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն:

Այնուհետև հաշվիչ հանձնաժողովի նախագահ Դ. Պետրոսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները՝ տեղեկացնելով, որ գիտական խորհրդի 20 անդամներից նիստին ներկա 18 անդամ մասնակցել է քվեարկությանը: Բաժանվել է 18 քվեաթերթիկ, քվեատուփում առկա է եղել 18 քվեաթերթիկ: Ձայները բաշխվել են հետևյալ կերպ. կողմ՝ 18, դեմ՝ 0, անվավեր՝ 0: Նիստի նախագահը առաջարկեց բաց քվեարկությամբ հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

Խորհուրդը միաձայն «կողմ» քվեարկեց:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաշվի առնելով փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, բ.գ.թ., դոցենտ Ա. Մենեմշյանին համարել ընտրված Մեդիաուսումնասիրությունների ու նշանագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- ԵՊՀ հրավիրյալ պրոֆեսորի դասավանդման դրամաշնորհի տրամադրման մրցույթին «Հեռուստալրագրություն» ՄԿԾ-ի մասնակցությունը երաշխավորելու հարցը:

Ն. Վարդանյանը նշեց «Հեռուստալրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի արդիականացման համատեքստում առաջարկվում է հրավիրել Նոր բուլղարական համալսարանի պրոֆեսոր, Նշանագիտական հետազոտությունների հարավարևելյան եվրոպական կենտրոնի ղեկավար Քրիստիան Բանկովին՝ ներդնելու «Ինովացիոն

լրագրություն և թվային միջավայր» նոր դասընթացը: Անհրաժեշտությունը պայմանավորված է մեդիատիրույթի արմատական փոփոխություններով, որտեղ հեռուստալրագրությունը դուրս է գալիս դասական ձևաչափերից և պահանջում նորարարական լուծումներ ու թվային միջավայրի խորքային ըմբռնում:

Դասընթացի ներդրման հիմնարար առաջնահերթություններն են.

1. Մասնագիտական տրանսֆորմացիա: Մեդիաարտադրանքը մշակելու և գնահատելու համար լրագրողի համար այսօր առաջնային է դառնում սպառողի վարքի խորքային ըմբռնումը և լրագրության ինովացիոն տրամաբանությամբ իմաստի կառավարման գործընթացները պատկերացնելը: Ք. Բանկովի դասախոսություններն ուղղված են թվային մեդիամիջավայրի ընդհանուր տրամաբանության ըմբռնմանը և նորարարության՝ որպես մեդիաէվոլյուցիայի շարժիչ ուժի գիտակցմանը, ինչը կարևոր նախապայման է թվային բովանդակության ստեղծման համար: Դասընթացը կենտրոնանում է արդի թվային միջավայրի վրա՝ դիտարկելով լրագրության (մեդիայի) վերափոխումները նորարարությունների, ալգորիթմների և արհեստական բանականության համատեքստում:

2. Միջազգային փորձի ներգրավում: Պրոֆեսորի փորձառությունը միջազգային հեղինակավոր բուհերում (Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ֆինլանդիա և այլն) և անգլերենով դասավանդման հմտությունները թույլ կտան ուսանողներին ինտեգրվել գլոբալ գիտական դիսկուրսին:

3. Ծրագրային շարունակականություն: Դասընթացը մեթոդաբանական հիմք է կրթական ծրագրի 2-րդ կիսամյակում դասավանդվող «Վիզուալ նշանագիտություն» առարկայի համար: Այն ապահովում է կրթական ծրագրի տրամաբանական շարունակականությունը՝ թույլ տալով տեսական գիտելիքը համադրել թվային մեդիաարտադրության պրակտիկ գործիքների հետ:

4. Լեզվական և հաղորդակցական հմտություններ: Դասավանդումը իրականացվելու է անգլերենով, ինչը նպաստելու է մագիստրանտների օտարալեզու մասնագիտական բառապաշարի զարգացմանը և նրանց մրցունակության բարձրացմանը: Պրոֆեսոր Ք. Բանկովի ներգրավումը և նշված դասընթացի ներդրումը ռազմավարական նշանակություն ունեն ժուռնալիստիկայի ֆակուլտետի համար՝ երաշխավորելով միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական նոր որակ:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Զ. Զ. Սարգսյան:
<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>- Երաշխավորել «Հեռուստալրագրություն» ՄԿԾ-ի մասնակցությունը ԵՊՀ հրավիրյալ պրոֆեսորի դասավանդման դրամաշնորհի տրամադրման մրցույթին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- «Հեռուստալրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի ղեկավար Ն. Վարդանյանի մշտադիտարկման արդյունքների մասին հաղորդումը:

Ն. Վարդանյանը ներկայացրեց ԿԾ-ի զարգացման հետագիծը՝ նշելով, որ ծրագիրն արդեն երեք տարի իրականացվում է Հանրային հեռուստաընկերության հետ համատեղ գործող դուալ կրթական մոդելով: Շեշտվեց, որ այս ձևաչափը դուրս է

գալիս սոսկ պրակտիկայի սահմաններից. Հանրային Հ/Ը-ն դիտարկվում է որպես լիարժեք կրթական միջավայր: Այն ծրագրի համար ոչ միայն տեխնիկական բազա է, այլև իրական աշխատանքային գործընթացների մեջ ներգրավվածության տարածք: Այստեղ ուսանողները ոչ միայն մասնակցում են հեռուստաընկերության ամենօրյա աշխատանքներին, այլև իրականացնում են սեփական նախագծերը՝ ձեռք բերելով մասնագիտական ինքնավարություն և անկախ փորձառություն:

Մշտադիտարկման ընթացքում դուրս բերված տվյալները վկայում են ծրագրի որակական և քանակական զարգացման մասին: Ծրագրի ղեկավարը փաստեց, որ ծրագրի շրջանավարտների և ուսանողների զբաղվածության ընդհանուր ցուցանիշը բարձր է. նրանց մեծ մասն արդեն իսկ աշխատում է մասնագիտական ոլորտում: Այս առումով հատկանշական է, որ ուսանողների աշխատանքային ներգրավվածության աստիճանը մեկնարկային շրջանի շուրջ 60%-ից այժմ հասել է 75%-ի, ինչը դուալ մոդելի արդյունավետության և ուսումնառության ընթացքում աշխատաշուկային լիարժեք ինտեգրման գլխավոր հավաստիքն է:

Ներկայացվեց միջին ՄՈԳ-ի դինամիկան ըստ տարիների.

- 2023/2024 ուստարի՝ 17.53
- 2024/2025 ուստարի՝ 18.01
- 2025/2026 ուստարի (1-ին կիսամյակ)՝ 15

Զեկուցողը պարզաբանեց, որ ՄՈԳ-ի թվային նվազումը պայմանավորված է ակադեմիական խստության բարձրացմամբ և գնահատման չափանիշների վերանայմամբ:

Ծրագրի ղեկավարը նշեց, որ իրականացվել է ծրագրի համապարփակ SWOT վերլուծություն, որի միջոցով դուրս են բերվել ԿԾ-ի զարգացման հիմնական ուղղություններն ու ռիսկերը: Ըստ ֆոկուս-խմբային հարցումների՝ շահակիցները որպես ծրագրի ամենաուժեղ կողմ նշել են իրական աշխատանքային միջավայրում սեփական նախագծերն իրականացնելու հնարավորությունը: Դուրս բերված վերլուծությունները հիմք են դարձել ռիսկերի կառավարման և բարելավման պլանի մշակման համար: Հատկանշական է, որ ծրագրի շրջանակներում որակական նոր նշաձող է սահմանվել օպերատոր-մենթորի ինստիտուտի ներգրավմամբ, ինչն ապահովում է ուսանողի անհատական նախագծերի տեխնիկական և ստեղծագործական բարձր որակը:

Ուսանողական հարցումների արդյունքները վերջին երեք տարիներին կայուն կերպով եղել են բարձր տիրույթում՝ տատանվելով 4.5-ից 5 միավորի սահմաններում: Ըստ ծրագրի ղեկավարի՝ ուսանողների հաջողություններն ու ծրագրի կայունությունը հնարավոր են դարձել բուհի դասախոսների և գործատուի գերազանցապես անհատական ջանքերի ու նվիրվածության շնորհիվ:

Առաջիկա ուստարում գործնական և հետազոտական աշխատանքների նկատմամբ սահմանվելու են որակական նոր, ավելի խիստ պահանջներ: Բարելավման պլանում նաև մշակվել են միջգիտակարգային մոտեցումների ամրապնդմանը, միջազգայնացմանն ու ֆակուլտետային ենթակառուցվածքների

արդիականացմանն ուղղված նոր նախագծեր, որոնք նպատակ ունեն ուսումնական գործընթացն առավել համապատասխանեցնել ծրագրի ներկայիս ակտիվ ռիթմին, արդի մեդիադաշտի պահանջներին ու բուհական կրթության հիմնական ուղղություններին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն.* Մարտիրոսյան, *Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Տ. Ս. Սիմյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ «Հեռաուստալրագրություն» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքը գնահատել դրական:

ԼՍԵՑԻՆ.- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Ա. Պարզյանի հաղորդումը ավարտական աշխատանքների պաշտպանության վերաբերյալ:

Ա. Պարզյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվել են նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն, տեխնիկապես կահավորված լսարանում և հրապարակային: Անդրադառնալով ներկայացված ավարտական աշխատանքների կատարման և ներկայացման որակներին՝ հանձնաժողովի նախագահը նշեց, որ քիչ չէին այնպիսի աշխատանքները, որոնք կարելի է ներկայացնել ցանկացած ակադեմիական միջավայրում, սակայն, կային նաև այնպիսի աշխատանքներ, որոնք զերծ չէին թերություններից: Ա. Պարզյանը մատնանշեց նաև աշխատանքների ներկայացման հետ կապված որոշ տեխնիկական խնդիրներ՝ առաջարկելով հետագայում բարելավել դրանք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան, Դ. Պետրոսյան, Ն. Վարդանյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ	Ն.Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ